

«Օլիմպիոնիկն Արտաքսատից»
Ա.Զ. Մելիք-Շախնազարովի գրքի
Էկրանավորման նախագծի ղեկավարների
ՈՒՂԵՐՁԸ

**Սիրելի ընկերներ, հարգելի հովանավորներ, բարերարներ,
ներդրողներ, անհատ անձինք,**

հայտնի է, որ մուլտիպլիկացիայի ոլորտում ժամանակակից տեխնոլոգիաները իրական հնարավորություններ են տալիս ստեղծել հիանալի և դիտման համար հաճելի աշխատանքներ: Հենց դրա և անհրաժեշտ ավելի քիչ (համեմատած խաղարկային ֆիմերի հետ) ֆինանսական ներդրումների պատճառով էլ որոշվել է էկրանավորել Ա.Զ. Մելիք-Շախնազարովի «Օլիմպիոնիկն Արտաքսատից» պատմավեպը՝ լիամետրաժ անիմացիոն 3D-ֆիլմի տեսքով:

Պատմավեպի այուժեի հիմքում ընկած են IV դարի երկրորդ կեսում տեղի ունեցած իրադարձությունները, երբ հայ պատանի Վարազդատը, մասնակցելով «բռնկեցներով մարտ» կոչվող մրցմանը, կարողացավ պատվով անցնել փորձությունները և դառնալ 291-րդ Օլիմպիական խաղերում՝ (մ.թ.ա. 385 թ.) Խաղերի պատմության մեջ առաջին օտարերկրացի-օլիմպիոնիկը (օլիմպիական չեմպիոնը):

Այնպես պատահեց, որ հենց այդ Խաղերը դարձան վերջինը համաշխարհային օլիմպիական սպորտի պատմության մեջ: Շատ հարյուրամյակներ անց ֆրանսիացի բարոն Պիեր դե Կուրբերտենը, միջազգային սպորտային մրցումների մտահաղացման իրականացման նպատակով՝ կարողացավ հասնել նրան, որ Օլիմպիական խաղերը վերականգնվեցին, դա տեղի ունեցավ 1896 թվականի ամռանը՝ դրանով անգնահատելի ներդրում կատարվեց սպորտի ժողովրդականացման գործում: Համաշխարհային քաղաքակրթությունը հզոր ազդակ է ստացել՝

սպորտային մրցումների զարգացման համար, որոնք մեծ հաջողությամբ անց էին կացվում Անտիկ օլիմպիական խաղերի ժամանակ մ.թ.ա. 776 թ-ից և արգելվել են հռոմեական կայսր Թեոդոսիոս I-ի կողմից մ.թ.ա 394 թ-ին:

Գլխավոր հերոսների երիտասարդությունը, սերը, հանդուրժողականությունը և խիզախությունն իսկապես հիացնում են և ստիպում խորհել այն ժամանակներում ապրող շատ մարդկանց բարձր արժանիքների մասին: Հիրավի, միայն բարձրագույն բարոյական արժեքների, ուժի և աշխարհայացի տեր մարդը կարող էր հաղթող դառնալ անհատական մրցումներում, ինչպես և պետության գահ բարձրանալ. օլիմպիոնիկ Վարազդատը եղել է այդ արժանավայել որդյակներից մեկը, որը հետագայում դարձավ Մեծ Հայքի արքա՝ Վարազդատ I:

Բոլոր ժողովուրդներն էլ ունեն իրենց հերոսները, սակայն հայ ժողովուրդը համաշխարհային քաղաքակրթության բոլոր ժամանակներում տվել է և տալիս է պատմությանն ուժեղ և խելացի մարդկանց այնպիսի քանակություն, որ մենք իրավամբ պետք է նրանցով հպարտանանք, նրանց անունները չպետք է մոռացվեն: «Բավական է կանչել հարյուր հայի, որպեսզի ետ մղել թշնամուն», - ասում էր ռուսական գեներալ, 1812 թվականի Հայրենական պատերազմի մասնակից, Դենիս Դավիդովը: Այդ խոսքերն առավելագույնս նկարագրում են քաջարի հայ մարտիկներին և խելացի զորապետներին, որոնք նույնպես կարող են լինել օլիմպիոնիկ Վարազդատի ժառանգները:

Մեզանից յուրաքանչյուրն իր մեջ կրում է իր նախնիների գենը, և մենք չենք կարող չանել ամեն ինչ՝ իրենց հիշատակը հարգելու համար. հենց այդ պատճառով էլ նրանց է նվիրվում «Օլիմպիոնիկն Արտաքսատից» լիամետրաժ անիմացիոն ֆիլմը: Ավելին, հայկական պատմության ևս մի մասնիկի մասին հայտնելը ոչ միայն մեր պարտքն է, այլև համաշխարհային մշակույթի առջև մեր պատվավոր պարտականությունը:

Ֆիլմը ստեղծվում է հովանավորների միջոցների և անհատական նվիրատվությունների հաշվին, ուստի եթե Դուք, սիրելի ընկեր, հնարավորություն ունեք ներդնել ձեր՝ անգամ նվազագույն լուման, Ձեր անունը կմնա դարեդար: Եվ դա ճշմարտություն է:

Մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է ինտերնետային ցանցի կայքէջում՝ <http://olympionikvarazdat.ru> (կամ <http://олимпиониквараздат.рф>) հասցեով:

Անկեղծ հարգանքով,

Արսեն Մելիք-Շախնազարով,
Սանասար Մարգարյան,

05.08.2012 թ.,

Մոսկվա